

Կ-300¹-16.07.2013,27.09.2013-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքը (այսուհետ՝ Օրենք) լրացնել նոր 29.1-ին հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 29.1.** Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ եւ այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս:

Մինչեւ գումարի գանձման վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը պարտավոր անձի գույքի վրա կարող է արգելանք դրվել: Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով արգելանքը դրվում է հարկային մարմնի կողմից՝ սույն օրենքի 30.2 հոդվածով սահմանված դեպքերում եւ կարգով, իսկ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված դեպքերում եւ կարգով:

Պարտավոր անձի կողմից գումարը գանձելու մասին որոշումն անբողոքարկելի դառնալու դեպքում գումարը գանձվում է «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:

Գանձման ընթացքում պարտավոր անձի կողմից հարկային պարտավորությունները մարելու դեպքում գումարը գանձելու մասին որոշումը ուժը կորցրած է ճանաչվում եւ գանձումը դադարեցվում է:»:

Եթե մինչեւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված 10 օրյա ժամկետը լրանալը պարտավոր անձը մարում է պարտավորության ոչ պակաս, քան քսան տոկոսը եւ ներկայացնում է բավարար հիմքեր այն մասին, որ գույքի վրա արգելանք դնելու եւ պարտավորությունը ըստ ժամանակացույցի չմարելու դեպքում ակնհայտորեն կվտանգվի իր գործունեությունը, ապա տեղական ինքնակառավարման մարմինը՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասով արգելանք կիրառելու համար սահմանված հիմքերի բացակայության դեպքում պարտավոր անձի հետ կնքում է պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց, որի տեւողությունը կարող է սահմանվել 2 ամսից մինչեւ 6 ամիս ժամկետով: Պարտավորության մարման ժամանակացույց կնքելու դեպքում պարտավոր անձի գույքի վրա արգելանք չի դրվում:

Տեղական ինքնակառավարման մարմինները պարտավորության աստիճանական մարման ժամանակացույց կարող են կնքել նաեւ պարտավոր անձի գույքի վրա արգելանք դնելուց հետո՝ սույն հոդվածի հիմնդրերով պարբերությանը համապատասխան: Գույքի վրա արգելանք դնելուց հետո

պարտավորության մարման ժամանակացույց կնքելու դեպքում արգելանք դնելու մասին որոշումը ճանաչվում է ուժը կորցրած:

Պարտավորության աստիճանական մարման ժամանակացույցով սահմանված յուրաքանչյուր վճարման ժամկետն ավելի քան 10 օրով խախտելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը դադարեցնում է պարտավորության աստիճանական մարման ժամանակացույցը: Պարտավորության աստիճանական մարման ժամանակացույցը դադարեցնելու վերաբերյալ տեղական ինքնակառավարման մարմինը ընդունում է վարչական ակտ, որի մասին օրենքով սահմանված կարգով ծանուցում է պարտավոր անձին: Այդ վարչական ակտն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելու օրվանից 30 օր հետո՝ պարտավոր անձից գումարը գանձելու մասին որոշումը դառնում է անբողոքարկելի եւ պարտավոր անձից գումարը գանձվում է «Վարչարարության հիմունքերի եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով:

Հոդված 2. Օրենքի 30-րդ հոդվածի առաջին եւ երկրորդ պարբերությունները ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Օրենքի 30.2 հոդվածում՝

1) 2-րդ պարբերությունում «կազմելու դեպքում» բառերից հետո լրացնել «եթե հարկային մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացքում արդեն իսկ ձեռքբերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ հարկ վճարողը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը, ապա» բառերը.

2) 3-րդ պարբերությունում «Գույքի արգելանքը» բառերը փոխարինել «Հարկային մարմնի կողմից գույքի արգելանքը» բառերով.

3) 5-րդ պարբերությունում «հարցը.» բառից հետո լրացնել «չկատարված պարտավորության չափը.» բառերը.

4) 13-րդ պարբերությունում «արգելանք դնելուց հետո՝ 1-ամսյա ժամկետում.» բառերը հանել, «դատարան հայց» բառերը փոխարինել «վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն», իսկ «կամ դատարանի կողմից հայցի ապահովման միջոց կիրառելու միջնորդության» բառերը հանել:

5) 13-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետեւյալ բովանդակությամբ.

«Արգելանք կիրառած անձինք եւ մարմինները պարտավոր են անհապաղ վերացնել իրենց կողմից կիրառած արգելանքը, եթե հարկ վճարողը ներկայացնում է պարտավորությունը լրիվ չափով վճարելը հավաստող անդորրագիրը կամ 29.1-ին հոդվածով սահմանված կարգով կնքված պարտավորության աստիճանական մարման ժամանակացույցը:»

6) 14-րդ պարբերության առաջին նախադասությունից առաջ լրացնել նոր նախադասություններ հետեւյալ բովանդակությամբ.

Գույքն արգելանքի վերցնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել գումարը գանձելու վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար սահմանված ժամկետում: Արգելանք դնելու մասին որոշումը դառնում է անբողոքարկելի հարկ վճարողից գումարը գանձելու վերաբերյալ որոշումն անբողոքարկելի դառնալու հետ միաժամանակ:

Հոդված 4. Օրենքը լրացնել նոր 29.2 հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.

«Հողված 29.2. Սույն օրենքի իմաստով պատշաճ ծանուցում է համարվում «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով՝ վարչական ակտի ընդունման մասին իրազեկելը:

Եթե հարկ վճարողը դիմել է հարկային մարմնին առաջարկելով սույն օրենքի 29.1 հոդվածի 1-ին եւ 7-րդ, ինչպես նաեւ 30.2 հոդվածի 4-րդ եւ 5-րդ պարբերություններում նշված վարչական ակտերն իրեն ուղարկել էլեկտրոնային եղանակով՝ իր կողմից հարկային մարմնին տրամադրված պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցով, ապա պատշաճ ծանուցում է նաեւ հարկ վճարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին կատարված ծանուցումը, եթե առկա է այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստումը:

Հողված 5. Անցումային եւ եզրակակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ-300²-16.07.2013,27.09.2013-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱՎԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի փետրվարի 18-ի ՀՕ-41-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 69-րդ հոդվածում «վարչական ակտերը,» բառերից հետո լրացնել «այդ թվում զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաեւ» բառերը:

Հոդված 2. Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի՝

- 1) «ա» կետում «6 ամսվա» բառերը փոխարինել «2 ամսվա» բառերով.
- 2) «գ» կետում «3 ամսվա» բառերը փոխարինել «2 ամսվա» բառերով:

Հոդված 3. Օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 88-րդ հոդվածը շարադրելն նոր խմբագրությամբ՝

«Հոդված 88. Դրամական պահանջների կատարման կարգը

1. Դրամական պահանջները ենթակա են կատարման անբողոքարկելի վարչական ակտերի հիման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

2. Եթե վարչական մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացքում արդեն իսկ ձեռքբերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ անձը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը, ապա մինչեւ գումարի գանձման վերաբերյալ որոշման անբողոքարկելի դառնալը վարչական վարույթ իրականացնող մարմինը իրավասու է գումարի գանձման վերաբերյալ որոշումը կայացնելուց ոչ շուտ քան 10 օր հետո ընդունել պարտավոր անձի գույքի վրա արգելանք դնելու մասին որոշում: Արգելանք դնելու մասին որոշումը սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո, եռօրյա ժամկետում, ուղարկվում է կատարման ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության, բացառությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորության կատարումն ապահովելու նպատակով արգելանք դնելու մասին որոշման: Արգելանքը դրվում է անհապաղ՝ պարտավոր անձի հարկային պարտավորությանը համարժեք գույքի վրա ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության կողմից՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

3. Դրամական պահանջները ներկայացվում են հարկադիր կատարման սույն օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Դրամական պահանջները սույն հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով հարկադիր կատարման ներկայացնելիս վարչական մարմինը ներկայացնում է դրամական պահանջները հավաստող համապատասխան վարչական ակտը եւ կատարման վերաբերյալ գրություն որում նշվում են՝

1) դրամական պահանջը հարկադիր կատարման ներկայացրած վարչական մարմնի անվանումը.

2) դրամական պահանջը հարկադիր կատարման ներկայացնելու տարին, ամիսը եւ ամսաթիվը.

3) վարչական ակտի համարը, որի հիման վրա դրամական պահանջը ներկայացվել է կատարման եւ գանձման ենթակա գումարի չափը.

4) վարչական ակտը ընդունելու տարին, ամիսը եւ ամսաթիվը.

5) վարչական ակտն անբողոքարկելի դառնալու տարին, ամիսը եւ ամսաթիվը.

6) պարտավոր անձի անունը, հայրանունը, ազգանունը, իրավաբանական անձի անվանումը, նրանց բնակության (գտնվելու վայրի) հասցեները, անձի անձնագրային տվյալները կամ հանրային ծառայությունների համարանիշը, իրավաբանական անձի՝ հարկ վճարողի հաշվառման համարը եւ պետական գրանցման կամ պետական հաշվառման համարը.

7) վարչական մարմնի գանձապետական հաշվեհամարը:

5. Եթե վարչական մարմինը մինչեւ դրամական պահանջը հարկադիր կատարման ներկայացնելը հետաձգել է վարչական ակտի կատարումը, ապա գրության մեջ նշվում է դրա կատարումը հետաձգելու ժամկետի ավարտը:

6. Գրությունը ստորագրում եւ կնիքով (առկայության դեպքում) հաստատում է վարչական ակտն ընդունած վարչական մարմնի իրավասու պաշտոնատար անձը:»:

Հոդված 5. Անցումային եւ եզրափակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունիսի 1-ից:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ընդունված դրամական պահանջի վերաբերյալ վարչական ակտերը կարող են ներկայացվել հարկադիր կատարման սույն օրենքին համապատասխան՝ վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո վեցամսյա ժամկետում:

Կ-300³-16.07.2013,27.09.2013-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածում լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«Սույն օրենքը սահմանում է նաև «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխին համապատասխան հանրային իրավական դրամական պահանջների կատարման պայմանները եւ կարգը՝ այնքանով, որքանով դրա նորմերը իրենց էությամբ (mutatis mutandis) կիրառելի են անբողոքարկելի վարչական ակտի կատարման նկատմամբ:»:

Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածում՝

1) վերնագրից հանել «դատական» բառը.

2) 1-ին մասում լրացնել նոր 7-րդ կետ հետևյալ բովանդակությամբ.

«7) անբողոքարկելի վարչական ակտերը՝ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:»:

Հոդված 3. Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 9-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«9) վարչական դատարանը վարույթ է ընդունել կատարման ենթակա դրամական պահանջի վերաբերյալ հայց:»:

Հոդված 4. Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 4-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«4) հանրային իրավական դրամական պահանջների կատարումն ապահովելու նպատակով՝ պատասխանողին պատկանող գույքի վրա արգելանք դնելու մասին վարչական մարմնի որոշումը կատարելու դեպքում:»:

Հոդված 5. Օրենքի 72.1-րդ հոդվածի 1-ին մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ-300⁴-16.07.2013,27.09.2013-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՎԱՐՉԱՎԱՆ ԻՐԱՎԱՆԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետև՝ Օրենսգիրք) 37-րդ հոդվածում լրացնել 6-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«6. Սույն օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված հայցադիմումներով համապատասխան վարչական տույժը նշանակվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված ժամկետում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասում.

1. «որը ենթակա է դատական կարգով բռնագանձման» բառերը հանել.

2. վերջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Տուգանքը բռնագանձվում է «վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ժամկետներում եւ կարգով»:

Հոդված 3. Օրենսգրքի 306-րդ հոդվածն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Անցումային եւ եզրակակիչ դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը կայացված վարչական տույժ նշանակելու մասին այն որոշումները, որոնց վերաբերյալ կատարողական թերթ չի տրվել, դատարաններից փոխանցվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն՝ հարկադիր կատարման համար:

Կ-300⁵-16.07.2013,27.09.2013-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Բնապահպանական եւ բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ ՀՕ-270 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Վճարման պարտավորությունների գծով գումարի մուծումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում գումարը ենթակա է գանձման «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ-300⁶-16.07.2013,27.09.2013-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈՂԿԱԾ 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (27 դեկտեմբերի 1997 թվականի, ՀՕ-186, այսուհետ՝ Օրենք) 35-րդ հոդվածի 4-րդ մասում «դատական կարգով» բառը փոխարինել «Վարչարարության հիմունքերի եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխով սահմանված կարգով» բառերով:

ՀՈՂԿԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ-300⁷-16.07.2013,27.09.2013-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈՂՎԱԾ 1. «Իրավական ակտեր մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի ապրիլի 3-ի թիվ ՀՕ-320 օրենքի (այսուհետ՝ օրենք) 22-րդ հոդվածի 1-ին մասից հանել «եւ արձակում վճարման կարգադրություններ» բառերը:

ՀՈՂՎԱԾ 2. Օրենքի 57-րդ հոդվածի վերնագրից եւ հոդվածի տեքստից հանել «ընդհանուր իրավասության» բառերը:

ՀՈՂՎԱԾ 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ-300⁸-27.09.2013-ՊԻ-010/2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի 338-րդ եւ 349-րդ հոդվածներում «քաղաքացիական» բառերից հետո լրացնել «կամ վարչական դատավարության» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: